

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶՄԱԹ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (2014)

1. Կրթական գործընթաց
2. Դասախոսական համակարգը և ուսումնական բեռնվածություն
3. Գիտահետազոտական աշխատանքներ
4. Բարեփոխումներ և կրթության որակի ապահովում
5. Սոցիալ-մշակութային և դաստիարակչական գործունեություն

Կրթական գործընթաց

Ֆակուլտետը հաշվետու ժամանակաշրջանում բակալավրիատի կրթության ծրագրեր է իրականացրել հետևյալ մասնագիտությունների գծով.

«Մաթեմատիկա» - առկա և հեռակա համակարգեր

«Ինֆորմատիկա» - առկա և հեռակա համակարգեր

«Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» - առկա և հեռակա համակարգեր

«Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» - առկա և հեռակա համակարգեր

«Ֆիզիկա» - առկա և հեռակա համակարգեր:

Մագիստրատուրայի կրթական ծրագրեր իրականացվել են հետևյալ մասնագիտությունների գծով.

«Մաթեմատիկա» - առկա համակարգ

«Ինֆորմատիկա» - առկա համակարգ

«Ֆիզիկա»- առկա համակարգ

Կրթական գործընթացը կազմակերպվում է կրեդիտային հենքով կազմված և 2011-2012, 2012-2013, 2013-2014 թվականներին ներառված ուսումնական պլաններով:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆիզմաթ ֆակուլտետում ուսանել են **353** ուսանողներ:

Ֆակուլտետի ուսումնամեթոդական աշխատանքներն սպասարկում են ֆիզիկայի 6, ինֆորմատիկայի 2, «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության 2 լաբորատորիաներ, ակադեմիկոս Սերգեյ Մերգեյանի անվան համակարգչային կենտրոնը, արհեստանոցները, էլեկտրոնային լսարանը և գիտահետազոտական կոմպլեքս լաբորատորիան:

Ֆիզմաթ ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է համալսարանի և ֆակուլտետի կանոնադրությունների հիման վրա՝ հենվելով ՀՀ կրթության մասին օրենքի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստացած հրահանգների ու որոշումների, ինչպես նաև համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, ուսումնական վարչության և գիտական մասի որոշումների հիման վրա:

Բակալավրիատի առկա ուսուցման համակարգի առաջադիմությունը կազմել է 97,5, իսկ երկրորդ կիսամյակինը՝ 99.1 տոկոս: Հեռակա համակարգում այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար 70 և 72 տոկոս:

Մագիստրատուրայի առաջադիմությունը կազմել է 99,1, իսկ երկրորդ կիսամյակինը՝ 100 տոկոս:

Ավարտական որակավորման քննությունների արդյունքները հետևյալն են.

Առկա ուսուցում (բակալավրիատ).

«Մաթեմատիկա» մասնագիտություն

h/h	Առարկան	Ուս. քանակը	«2»		«3»		«4»		«5»	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1.	Մաթեմատիկա	6	0	0	1	16.6	1	16.6	4	66.7
2.	Մանկ. և ՄԴՄ	6	0	0	1	16.6	1	16.6	4	66.7

«Ինֆորմատիկա» մասնագիտություն

h/h	Առարկան	Ուս. քանակը	«2»		«3»		«4»		«5»	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1.	Ինֆորմատիկա	16	0	0	6	37.5	6	37.5	4	25
2.	Մանկ. և ԻԴՄ	16	1	6.25	8	50	4	25	3	18.75

«Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտություն

h/h	Առարկան	Ուս. քանակը	«2»		«3»		«4»		«5»	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1.	Կիրառական մաթեմատիկա	18	2	11	3	16.5	7	38.5	6	33
2.	Ֆիզիկա	18	0	0	5	27.5	9	49.5	4	22

«Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտություն

h/h	Առարկան	Ուս. քանակը	«2»		«3»		«4»		«5»	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1.	Տեխն. և մասն. առարկաներ	8	0	0	5	62.5	2	25	1	12.5
2.	Մանկ. և ՏՂՄ	8	0	0	5	62.5	2	25	1	12.5

Պետք է նշել «Մաթեմատիկա» մասնագիտության բակալավրիատի շրջանավարտների գերազանց արդյունքները՝ համամատած այլ մասնագիտությունների հետ:

Հեռակա ուսուցում (բակալավրիատ).

«Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտություն

h/h	Առարկան	Ուս. քանակը	«2»		«3»		«4»		«5»	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1.	Տեխն. և մասն. առարկաներ	11	2	18	6	55	1	9	2	18
2.	Մանկ. և ՏԴՄ	11	-		4	36	3	28	4	36

Ինֆորմատիկա» մասնագիտություն

h/h	Առարկան	Ուս. քանակը	«2»		«3»		«4»		«5»	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1.	Ինֆորմատիկա	20	7	35	9	45	4	20		
2.	Մանկ. և ԻԴՄ	20	2	10	13	65	5	25		

«Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտություն

h/h	Առարկան	Ուս. քանակը	«2»		«3»		«4»		«5»	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1.	Կիրառական մաթեմատիկա	10	3	30	5	50	2	20		
2.	Ֆիզիկա	10	4	40	5	50	1	10		

Մագիստրոսական կրթական ծրագիր

«Մաթեմատիկա» մասնագիտություն

h/h	Առարկան	Ուս. քանակը	«2»		«3»		«4»		«5»	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1.	Ավարտական աշխատանք	7	0	0	0	0	2	28.57	5	71.4

«Ֆիզիկա» մասնագիտություն

h/h	Առարկան	Ուս. քանակը	«2»		«3»		«4»		«5»	
			քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
1.	Ավարտական աշխատանք	7	0	0	0	0	1	14.28	6	85.68

2014թ. մագիստրատուրայի ծրագրով առկա համակարգում ուսուցումն ավարտեցին 14 ուսանողներ (7-ը՝ «Մաթեմատիկա», 7-ը՝ «Ֆիզիկա» մասնագիտություններով): Նրանցից 9-ը բուհն ավարտեցին գերազանց առաջադիմությամբ (4-ը՝ «Մաթեմատիկա», 5-ը՝ «Ֆիզիկա» մասնագիտություններով):

Բակալավրիատի կրթական ծրագրով ուսուցումն ավարտել են 74 ուսանողներ (46 առկա և 28 հեռակա): Նրանցից 5-ը բուհն ավարտեցին գերազանց առաջադիմությամբ (առկա համակարգում):

2014թ. ուստարում ֆակուլտետի հայտարարված երեք մասնագիտությունների գծով 1-ին կուրսեր են ընդունվել.

բակալավրի կրթական ծրագիր.

առկա բաժին՝ 57 ուսանող, հեռակա բաժին՝ 24

մագիստրոսական կրթական ծրագիր՝ 7:

Ուսուցման որակի և ուսանողների գիտելիքների արդարամիտ գնահատման կարևոր ցուցանիշներ են մաղունները:

2014թ. ուստարուն ֆակուլտետից ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով հեռացվել է մեկ, հեռակա բաժնից՝ 11 ուսանող:

Առկա բաժնից տարկետման է մեկնել 1 ուսանող: Հեռակա բաժնի 4 և առկա բաժնի 9 ուսանող մեկնել են զինծառայության, որոնցից 2-ը՝ անվճար համակարգից: Մեկ ուսանող զինծառայության է մեկնել կցագրումից հետո (առկա բաժին):

Իր դիմումի համաձայն ազատվել են համալսարանից առկա և հեռակա բաժնիներից 3-ական ուսանողներ: Ձինծառայությունից վերադարձել է առկա բաժնում 8, հեռակա բաժնում՝ 11 ուսանող: Առկայից հեռակա բաժին է տեղափոխվել զինծառայությունից վերադարձած 4 ուսանող:

Հեռակա բաժնում ուսումնական պարապմունքներից բացակայության պատճառով հեռացվել են 3 ուսանողներ: Պայմանագրային պարտականությունները չկատարելու պատճառով հեռացվել է հեռակա բաժնից 2 ուսանող: Վերականգնվել է 6 ուսանող: 5 ուսանող տեղափոխվել է հեռակա բաժին առկա բաժնից, 3 ուսանող մեկնել է զինծառայության, 2 ուսանող ստանում են 2-րդ մասնագիտություն: Հեռակա բաժնում ուսանում են 3 ուսուցիչներ:

Քննաչրջանների արդյունքները քննարկվել են ֆակուլտետի գիտաուսումնամեթոդական խորհրդում ու համապատասխան ամբիոններում, և առաջիկայում ևս կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ վիճակը էլ ավելի բարելավելու ուղղությամբ:


Բավարար մակարդակով են կազմակերպվել արտադրական պրակտիկաները: Բակալավրիատի ուսանողների մանկավարժական պրակտիկայի համար ընտրվել են՝ «Մաթեմատիկա» բաժին՝ թիվ 15 դպրոցը, «Ինֆորմատիկա» բաժին՝ թիվ 1, 3, 4 դպրոցները, «Եվրիկա» հատուկ դպրոցը, ՎՊՀ հեռակետային վարժարանը, իսկ «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» բաժին՝ թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան, թիվ 10 ավագ դպրոց և ՎՊՀ հեռակետային վարժարանը: «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության ուսանողները արտադրական պրակտիկան անցկացրել են «Մայլան» ՍՊԸ-ում և ՎՊՀ համակարգչային կենտրոնում: Արտադրական պրակտիկայից առաջ

անպայման կազմակերպում ենք խորհրդակցություններ համապատասխան կուրսերի ուսանողների, մեթոդիստների, մանկավարժների և հոգեբանների մասնակցությամբ:

Ինչպես և նախորդ տարիներին, մագիստրատուրայի բաժնի ուսանողների արտադրական պրակտիկան այս ուստարում ևս կազմակերպվեց բուհում: Փորձը ցույց է տալիս, որ մեր ֆակուլտետի մագիստրատուրայի մի շարք ուսանողներ 2-րդ կուրսում արդեն ի վիճակի են բակալավրիատում դասավանդելու:


Դասախոսական համակազմ և ուսումնական բեռնվածություն

Ֆակուլտետում գործում են 3 մասնագիտական ամբիոններ, որտեղ աշխատում են հիմնական հաստիքներով և ժամավճարային կարգով 44 դասախոսներ այդ թվում՝ գիտության դոկտոր, պրոֆեսոր՝ 1, 28 թեկնածուներ, որոնցից 25-ը՝ դոցենտներ և համահամալսարանական ամբիոնների դասախոսներ:



2014թ. աշխատանքի է հրավիրվել համալսարանի մեկ շրջանավարտ:

Պրոֆեսորադասախոսական համակազմի մինչև 30 տարեկան դասախոսների թիվը 2 է, 30-40 տարեկան՝ 2, 40-50՝ 7, 50-60՝ 9, 60-70՝ 13, 70-ից բարձր՝ 5:



Ֆակուլտետի փորձառու, բանիմաց, գիտամանկավարժական և հետազոտական լավ դպրոցներ անցած դոցենտների միջին տարիքը բարձր է, որը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս և նոր, երիտասարդ, խոստումնալից կադրերի նախապատրաստման հրատապ խնդիրներ առաջադրում:

Գիտահետազոտական աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ամբիոնների աշխատակիցները լույս են ընծայել նաև 2 տասնյակ հոդվածներ. այդ թվում՝ ինֆորմատիկայի ամբիոնը՝ 15 և ֆիզիկայի ամբիոնը՝ 5:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքները նրանց կրթության կարևոր բաղադրիչներից են: Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության աշխատանքները համակարգվում են ֆակուլտետի ՈՒԳԸ խորհրդի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում անցկացվել է ՈՒԳԸ կոնֆերանս, որտեղ զեկուցված 16 աշխատանքներից լավագույնները երաշխավորվել են և զեկուցվել համալսարանի ՈՒԳԸ տարեկան կոնֆերանսում: Ֆակուլտետի 4 ուսանողներ ՈՒԳԸ շրջանակում մասնակցել են և զեկուցումներով հանդես եկել Գյումրիի պետական մանկավարժական համալսարանում տեղի ունեցած ՈՒԳԸ միջբուհական կոնֆերանսում: Ջեկուցված բոլոր աշխատանքները երաշխավորվել են հրատարակման:

Ամբիոնների առջև շարունակաբար խնդիր է դրված ստեղծելու ՌԻԳԸ աշխատանքներ կատարելու հնարավորություններ բոլոր այն ուսանողների համար, ովքեր ցանկություն ունեն և ընդունակ են զբաղվելու:

Բարեփոխումներ և կրթության որակի ապահովում

Ֆակուլտետերը լիովին ներգրավված է բուհի կողմից իրականացվող կրթական համակարգի բարեփոխումների և համալսարանական կրթական ծրագրերի կազմման գործընթացին:

ա) Յունեսկոյի դասակարգմամբ նոր ձևաչափով և պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմվել, մշակվել են բակալավրի և մագիստրատուրայի մասնագիտությունների բնութագրերը:

բ) Կրեդիտային համակարգի պահանջներին և չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլաններ են կազմվել առկա ուսուցման բակալավրի «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտությունների համար, որոնք ուղարկվել են լիցենզավորման:

գ) Ամբիոնների կողմից վերամշակվել են թողարկվող մասնագիտությունների առարկայական նկարագրերը և ուսումնամեթոդական փաթեթները, ուսումնական պլանին համապատասխան փոփոխվել են առարկայական ուսումնական ծրագրերը, վերամշակվել դասախոսական տեքստերը:

դ) Նոր ուսումնական պլաններին համապատասխան վերամշակվում են մասնագիտությունների տեղեկագրքերը:

ե) Թողարկվող ամբիոնների կողմից կազմվել են մասնագիտությունների կրթական ծրագրերը: Թիմերը ներկայումս զբաղված են թերությունների վերացման և հիմքերի ապահովման գործընթացներով:

զ) Որակի ապահովման կենտրոնի, ինչպես նաև ֆակուլտետի կրթական ծրագրերի մշակման խմբերի կողմից հարցումներ են անցկացվել ուսանողների, գործատուների շրջանում ուսումնական ծրագրերի, դասավանդման մեթոդների, նրանց որակի ապահովման, գնահատման չափանիշների, գործիքների, մեխանիզմների բարելավման ուղիների, կրթական բարեփոխումների ընթացքի վերաբերյալ:

ե) Ֆակուլտետի ամբիոնների վարիչները, լաբորանտները և դասախոսները մասնակցում են համալսարանի ՈԱԿ-ի սեմինարներին, խորհրդատվություններին, ինչպես նաև ինքնավերլուծության աշխատանքներին:

Կրթական ծրագրերի վերանշակման մասնագիտական խմբերի մեջ ընդգրկված են դեկանատի, թողարկվող ամբիոնների և գործատուների ներկայացուցիչներ, ինչպես նաև ուսանողներ:

Ծրագրերում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան ներառնված են.

ա/ մասնագիտության կրթական ծրագրի նկարագիրը,

բ/ մասնագիտության կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները,

գ/ ծրագրերի կրթական վերջնարդյունքները և կոմպետենցիաները,

դ/ առաջավոր փորձի համեմատական վերլուծությունը սահմանված կարգերի և ընթացակարգերի շրջանակներում,

ե/ մասնագիտական կրթական ծրագրերի համադրելիությունը որակավորումների ազգային շրջանակի հետ:

Կրթության կրեդիտային համակարգի կարևոր գործառույթներից են ընթացիկ ստուգումները և ուսանողների գնահատման բազմագործոնային եղանակը:

Սոցիալ-մշակութային և դաստիարակչական գործունեություն

Ֆիզմաթ ֆակուլտետի լավագույն ուսանողները ստացել են Վանաձորի քաղաքապետարանի, Լոռու մարզպետարանի և համալսարանի սահմանած անվանական կրթաթոշակները: Ֆիզմաթ ֆակուլտետի դեկան Ժ. Հախինյանի անվան կրթաթոշակ 2014թ. ստացել են «Մաթեմատիկա» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողուհիներ Անի Վարթորյանը և Լիլիթ Մատինյանը:

Ֆակուլտետի ուսանողները մասնակցել են համալսարանական բոլոր միջոցառումներին մշակույթի նշանավոր գործիչների հետ հանդիպումներին, ռազմահայրենասիրական, քաղաքական, պատմական և ցեղասպանության թեմաներով դասախոսություններին, ֆիլմերի դիտումներին, տոնական հանդեսներին, ինչպես նաև, իհարկե, Եղեռնի, Երկրաշարժի զոհերի խաչքար-հուշարձաններ այցելություններին, ՀՀ

անկախության քսաներեքամյակին նվիրված քայլարշավին և մարզամշակութային միջոցառումներին:

2014թ. նոյեմբեր ամսին Գյումրիում կայացած նորարարական գաղափարների տարածաշրջանային մրցույթում «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներ Նարեկ Ջաղինյանը, Էդվին Գալոյանը և Արթուր Բեկչյանը զբաղեցրին 3-րդ պատվավոր հորիզոնականը՝ արժանանալով պատվոգրի և մրցանակների:

Ուսանողական խորհրդի կողմից մշտապես կազմակերպվում են բուհ-դպրոց կապը ամրապնդող միջոցառումներ:

Ապրիլ ամսին «Մաթեմատիկա» մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերը կազմակերպեցին միջոցառում թիվ 1 դպրոցում՝ «Թվերի աշխարհ» խորագրով: Միջոցառում կազմակերպվել էր «Պի» թվի ծննդյան օրվա առթիվ:

2014թ. նոյեմբերին «Մաթեմատիկա» մասնագիտության 2-րդ, 3-րդ, ինչպես նաև «Ինֆորմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսի նախաձեռնությամբ նույն խորագրով միջոցառում կազմակերպվեց թիվ 3 դպրոցում:

Ֆակուլտետը մշտապես մասնակցում է ամենամյա հրաձգության մրցույթին և գրավում պատվավոր հորիզոնականներ: Հաշվետու տարում տղաների և աղջիկների խմբերում առաջատար հորիզոնականները զբաղեցրել են մեր ֆակուլտետի ուսանողները և ուսանողուհիները:

Հրաձգության մրցույթում մեր ֆակուլտետի ուսանողները ոչ պակաս հաջողություն գրանցեցին նաև 2014 թ. սեպտեմբերին, երբ աղջիկների թիմից Ադրինե Դավթյանը («Ինֆորմատիկա մասնագիտության 2-րդ կուրս») գրավեց 2-րդ հորիզոնականը:

Հոկտեմբեր ամսին սեղանի թեմիսի ներհամալսարանական մրցաշարի ժամանակ ֆակուլտետի աղջիկներից Ադրինե Դավթյանը («Ինֆորմատիկա» մասնագիտության 2-րդ կուրս), Լուսինե Կարապետյանը («Ինֆորմատիկա» մասնագիտության 2-րդ կուրս) և Նարինե Սինոնյանը («Ֆիզիկա» մասնագիտության 3-րդ կուրս) գրավեցին համապատասխանաբար 1-ին, 2-րդ և 3-րդ հաղթական հորիզոնականները: Տղաների թիմում աչքի ընկավ «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Էդվին Գալոյանը՝ գրավելով 1-ին հորիզոնականը:

2014թ. հոկտեմբերի 15-ին «Ինֆորմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Արմինե Գևորգյանը Երևանում կայացած ուսանողական վազքի մրցույթում գրավեց 1-ին հորիզոնականը:

13.11.2014թ. ֆակուլտետի աղջիկների թիմը ներհամալսարանական բասկետբոլի մրցաշարի ժամանակ գրավեց 2-րդ հորիզոնականը:

2014թ. նոյեմբերին կայացած «Ոսկե աշուն» մրցույթներում շարքում ձեռագործ աշխատանքների մեջ լավագույնը ճանաչվեց «Ֆիզիկա» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Մայա Խաչիկյանի աշխատանքը, իսկ «Ժողովրդական երգ» անվանակարգում 3-րդ հորիզոնական գրավեց «Ինֆորմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Սիրամարգ Քոչարյանը:

2014թ. նոյեմբերին ֆակուլտետում ձևավորվեց երգչախումբ՝ Ս. Հարությունյանի ղեկավարությամբ:

Ֆակուլտետը «Ֆիզիկա» մասնագիտության 1-ին, «Մաթեմատիկա» մասնագիտության 3-րդ, 2-րդ, «Ինֆորմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսերում ունի ստեղծագործող ուսանողներ, որոնց բանաստեղծությունները ընտրվել են համալսարանի պարբերաթերթում տպագրության համար:

2015թ. ֆիզմաթ ֆակուլտետի գլխավոր խնդիրներից են լինելու կրթության որակի բարձրացումը, համալսարանական ծրագրերի ներդրումը, դասախոսական կազմի երիտասարդացումը, երիտասարդ կադրերի գիտական մակարդակի բարձրացումը, ուսանողների ինքնուրույն աշխատանքների որակի բարելավումը և անցած տարիների թերացումների և բացթողումների վերացումը:

Ֆիզմաթ ֆակուլտետի ղեկան՝

Հ.Ֆ. Գրիգորյան